CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամուլի հաղորդագրություն

Հունիսի 19, 2024

ՔՈԱՖ-ի կողմից մշակված անգլերենի դասագրքերը հաղթել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հայտարարած մրցույթում

ԵՐԵՎԱՆ — «Հայաստանի մանուկներ» հիմնադրամն ուրախությամբ (ՔՈԱՖ) հայտնում է, որ իր թիմի կողմից 3-րդ, 6-րդ և 8-րդ դասարանների համար մշակված անգլերենի դասագրքերը հաղթող են ճանաչվել կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) կողմից հայտարարված հանրակրթական դպրոցների նոր դասագրքերի բաց մրցույթում: Այսպիսով, հաղթելով մրցույթում՝ դրանք երաշխավորվել են ԿԳՄՍՆ-ի կողմից և 2024-2025 ուսումնական տարվանից սկսած հանրապետության ամբողջ տարածքում կկիրառվեն որպես հիմնական դպրոցական դասագրքեր:

Այս բացառիկ նվաճումը ՔՈԱՖ-ի անգլերենի ծրագրերի թիմի և դասագրքերի հեղինակ-ուսուցիչների անգնահատելի նվիրման և աշխատանքի արդյունք է: Վերջիններիս ներգրավվածությունը հատկապես էական է դասավանդման երկարամյա փորձի տեսանկյունից: Դպրոցականների կարիքների և մարտահրավերների մասին ունեցած նրանց խորը պատկերացումը մեծապես օգնել է արդիական, հետաքրքիր ու ներգրավող ուսումնական նյութերի մշակման գործում:

Դասագրքերի կազմման ընթացքում Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը եղել է ՔՈԱՖ-ի վստահելի ու կարևոր գործընկերը: Վերջին երկու տարիների ընթացքում դրանց բովանդակությունը փորձարկվել և բարելավվել է հիմնադրամի ու դեսպանատան համատեղ անգլերեն կրթական ծրագրերի շրջանակներում: Այն ուսանողները, որոնք արդեն իսկ սովորել են այդ նյութերով, ոչ միայն բարելավել են իրենց լեզվական գիտելիքները, այլև ձեռք են բերել արժեքավոր հմտություններ՝ ինչպիսիք են հանրային խոսքը, քննադատական մտածողությունը և հետազոտական կարողությունները:

ՔՈԱՖ-ի անգլերեն նոր դասագրքերի առանցքային կետերից են ժամանակակից մեթոդաբանությունն ու բովանդակությունը, որոնց շնորհիվ դրանք ինտերակտիվ ու ներգրավող են: Այս մոտեցումը դասապրոցեսը դարձնում է առավել գրավիչ ու հետաքրքիր, իսկ ուսումնառությունը հենվում ոչ այնքան տնային աշխատանքների, որքան դասարանում ստացած գիտելիքի և այն գործականում կիրառելու վրա:

«ՔՈԱՖ-ի համար սա հսկայական նվաճում է»,-նշում է ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը,-«Անգլերենի գերազանց գիտելիքներ փոխանցելուց զատ, մեր դասագրքերը նաև զարգացնում են այնպիսի կարևոր հմտություններ, ինչպիսիք են անկախ մտածողությունը, հրապարակային խոսքը, վերլուծական մտածողությունը, թիմային աշխատանքը և հետազոտական կարողությունները: Մեզ համար մեծ պատիվ է, քանի որ մեր մշակած դասագրքերը վճռորոշ դեր կունենան գալիք սերնդի պայծառ ապագայի ուրվագծման գործում»:

ՔՈԱՖ-ը հանձնառու է տրամադրել բարձրորակ կրթական ռեսուրսներ, որոնք ոչ միայն կբարելավեն լեզվի իմացության մակարդակը, այլև դպրոցականներին կօժտեն 21-րդ դարի հմտություններով և կօգնեն ընդլայնել նրանց մտահորիզոնը: Մենք անհամբերությամբ սպասում ենք, որ ՔՈԱՖ-ի՝ պետական նոր չափորոշչին համապատասխան դասագրքերը հայտնվեն հայաստանցի դպրոցականների դասասեղաններին՝ ընդլայնելով երեխաների կրթական հնարավորությունները:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին վերաբերող ծրագրերի ու կարիքների վրա: ՔՈԱՖ-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացումը: ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր ծրագրերը *2004*թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից և ընդլայնվելով Հայաստանում ու Արցախում՝ *82+* համայնքներում՝ ներդնելով ավելի քան *70* մլն ԱՄՆ դոլար՝ *100,000*-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:

ՔՈԱՖ-ի հաղորդակցության բաժնի ղեկավար
Նանա Մարդոյան
Էլ. հասցե՝ nana.mardoyan@coaf.org
Բջջ.՝ +374 55 003 723